
ԶՈՆ ԳՐԵՊԻՆ

Հայագիտության երախտավորներից է Զոն Գրեպինը, որը նկատելի հետք է թողել հայ լեզվաբանության մեջ: Շուրջ 35 տարիների գործունեությամբ, բացի տասնյակ



գրքերից ու հարյուրավոր հոդվածներից, նա հիմնադրել է միջազգային հայագիտական երկու պարբերական և կազմակերպել հայագիտական միջազգային գիտաժողովներ: Իր գիտական գործունեությունը սկսելով անցյալ դարի 70-ական թվականներից՝ «երկաթե վարագույրի» ժամանակներից, նա հայերենի մեջ հմտանալու և Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի հայոց ձեռագրերը ուսումնասիրելու նպատակով 1972 թ. ընտանիքով գալիս է Հայաստան:

Զ. Գրեպինը ծնվել է Միացյալ Նահանգներում՝ Նյու-Յորք նահանգի Բոչեստեր քաղաքում, 1937 թ. ապրիլի 2-ին: Ավարտել է նույն քաղաքի համալսարանը՝ ընտրելով լեզվաբանությունը որպես իր նախասիրությունների առարկա, ապա շարունակել է կրթությունը Կալիֆոռնիայի Լոս Անջելեսի համալսարանի հնդեվրոպաբանության բաժնում. ուսումնասիրել է հին լեզուներ, այդ թվում՝ գրաբար և դրանում հմտանալու նպատակով գործուղվել է Հայաստան:

Մեկ տարվա ընթացքում Զ. Գրեպինը պատրաստում է հոդված հայ-խեթական մի գուգահեռի մասին, որը և հրատարակում է «Պատմաբանասիրական հանդես»-ի 1972 թ. - 3-ում (էջ 221–222): Հոդվածը լույս է ընծայում նաև ռուսերեն թարգմանությամբ, որպեսզի ներկայացնի իր պրպտումները գիտնականների ավելի լայն շրջաններին: Նա գիտական կապեր է հաստատում ոչ միայն Հայաստանի (Գ. Ջահուկյան, Վ. Քոսյան, Է. Ադայան, Է. Դելալյան), այլև Խորհրդային Միության բազմաթիվ հայագետների, մասնավորապես՝ Գ. Դյակոնովի (Մանկտ Պետերբուրգ), Թ. Գամկրելի-ձեի, Վ. Իվանովի, Է. Թումանյանի (Մոսկվա) և ուրիշների հետ:

Այս շրջանում Գրեպինի մոտ հղանում է այն միտքը, որ անհրաժեշտ է անգլերենով հիմնադրել հայագիտական պարբերական, որտեղ տարբեր երկրների գիտնականներ կարող են ներկայացնել իրենց ուսումնասիրությունների արդյունքները: Հայթայթելով նյութական միջոցներ՝ նա հիմնում է “Annual of Armenian Linguistics” պարբերականը, որի առաջին համարը լույս է տեսնում 1980 թ. ԱՄՆ-ում:

Բացի հոդվածներից ու մենագրություններից, Զ. Գրեպինը մեծ հաջողությամբ գրախոսում է բազմաթիվ մասնագիտական և դրանց հարող գրքեր, որոնք լույս են

տեսնում տարբեր երկրներում: Նրա ուշադրությունից չի վրիպում և ոչ մի արժանի գիրք: Ուշագրավ է Գրեյինի գրախոսության ոճը: Համառոտ բնութագրելով գիրքը՝ նա չի մտնում մանրամասների մեջ, այլ ընթերցողի ուշադրությունը բնեռում է մի հետաքրքիր կամ զավեշտական դիպվածի վրա և հումորով ներկայացնելով այն՝ հետաքրքրություն առաջացնում գրքի նկատմամբ: Այս մեթոդը առավել ցայտուն է երևում նրա բազմաթիվ գրախոսականներում, որոնք պարբերաբար հրատարակվում էին շատ հեղինակավոր “London Times” թերթի գրական հավելվածում (Literary Supplement):

Գրեյինը մեծ ուշադրություն է դարձրել նաև հայ պոեզիայի տարածմանը և այդ նպատակով Հ. Օշականի գործուն մասնակցությամբ 1986 թ. հիմնադրել է հայ պոեզիայի և քննադատության պարբերական, որը հրատարակել է “RAFT” ժողովածուի մեջ:

Գրեյինը անմիջական մասնակցություն է ունեցել հայագիտական գրեթե բոլոր գիտաժողովների կազմակերպմանը: Նրա գիտական հետազոտությունների շրջանակը բավական տարողունակ է: Ուշագրավ է, որ ամերիկյան ուսանողներին հայագիտական նորագույն ձեռքբերումները ներկայացնելու հետ միասին Գրեյինը 1992 թ. Ամալյա Խաչատրյանի հեղինակությամբ անգլերենով հրատարակում է հայերենի բարբառագիտությանը նվիրված մի ծավալուն ձեռնարկ: Բարբառների նմուշները (հեքիաթ կամ ասացվածք, պատմվածք) զետեղված են յուրաքանչյուր բարբառի նկարագրության վերջում:

Գրեյինի կազմակերպչական բացառիկ ունակությունը հատկապես նկատելի է իր իսկ հիմնած լեզվաբանական հանդեսի շուրջը փայլուն գիտնականների մի ստվար բազմություն հավաքելու ուղղությամբ. այդտեղ ներկայացվում էին այն բոլոր քիչ թե շատ հայտնի ուսումնասիրությունները, որոնք հրատարակվում էին ինչպես Հայաստանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Տարեգրքի խմբագրության կազմում էին միջազգային ճանաչում ստացած գիտնականներ, ինչպիսիք են իտալացի լեզվաբան Ջոնկատլո Բոլոնիեզին, ամերիկյան գիտնական Էրիկ Նեմպը, գերմանացի գիտնական Ռուդիգեր Շմիդտը, Գևորգ Ջահուկյանը: Այն մեծ ներդրում ունեցավ հայ լեզվաբանության նվաճումները տարածելու գործում՝ իր շուրջը համախմբելով հայագիտության բազմաթիվ ջատագովների: Տարեգիրքը շուրջ 25 տարի հրատարակվելուց հետո դադարեցրեց իր գործունեությունը, երբ Գրեյինը հեռացավ խմբագրությունից:

Հայ ժողովրդի մեծ բարեկամ Ջոն Գրեյինի անունը միշտ վառ կմնա նրան հիշողների սրտերում, իսկ նրա հայագիտական բազմաթիվ ուսումնասիրությունները կարող են օգտակար լինել հայագիտության հետագա զարգացման համար:

ԱՄԱԼՅԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ (Շվեդիա),
ՌՈՒԲԵՐՏ ԹՈՒՄԱՆՅԱՆ